
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1918 թ. մայիսի վերջերին անկախ պետականության ձեռքբերումից հետո Վրաստանի ղեկավարությունն իր ներքին ու արտաքին քաղաքականության մեջ սկսեց վարել ազգային խտրականություն, մասնավորապես հայերի նկատմամբ: Դրա ցայտուն դրսևորումներից էին նրա ընդգծված ու միտումնավոր հակահայկական գործողությունները: Լայնորեն հայտնի է թուրքական յաթաղանից ու ադրբեջանական հրոսակներից մազապուրծ Ջավախքի և Անդրկովկասի հայաշատ գավառներից՝ Նուխուց, Արեշից, Գյոկչայից, գաղթական հայության նկատմամբ ցուցաբերած դաժան վերաբերմունքը, երբ վերջիններիս արգելվեց մուտք գործել Վրաստան՝ դրանով իսկ նրանց ցրտի, սովի ու հիվանդությունների ճիրաններում թողնելով Բակուրիանիի ու երկրամասի լեռնային այլ վայրերում: Վրաց կառավարությունն իր քայլերով խոչընդոտում էր Վրաստանում բնակվող հայ ազգաբնակչությանը երկրի կյանքին լիիրավ մասնակից լինելուց՝ դա «արդարացնելով» նրանով, թե, իբր, վերջիններս իրենց հայտարարել են Հայաստանի Հանրապետության հպատակ: Հակահայկական քաղաքականության գագաթնակետը դարձավ 1918 թ. վերջին Հայաստանի նկատմամբ Վրաստանի սանձազերծած պատերազմը:

Վիրահայերի ու Հայաստանի հանդեպ վրաց կառավարության վարած այս և համանման այլևայլ գործողություններն իրավացի դժգոհություն ու վրդովմունք առաջացրեցին թիֆլիսահայ մտավորականության լայն շրջաններում: Այս առումով առանձնանում էր Մանուկ Աբեղյանի քննադատական հատու խոսքը¹: Նա իր բողոքի ձայնը բարձրացրեց երկու հարևան ժողովուրդների միջև փոխադարձ անվստահության մթնոլորտ սերմանելու՝ վրաց կառավարության քաղաքականության դեմ: Դա իր մարմնավորումն է գտել, մասնավորապես, գիտնական - հրապարակախոսի «Հայեր և վրացիներ» վերնագրով հոդվածաշարում², որը տպագրվել է Թիֆլիսում հրատարակվող «Ժողովրդի Չայն» թերթի 1918 թ. համարներում (սեպտեմբեր-հոկտեմբերի սկիզբ):

Ստորև հրապարակելով խնդրո առարկա հոդվածաշարը՝ նպատակ ունենք ոչ միայն վեր հանել դրանում արծարծված հարցերի արդիական հնչեղությունը, այլև ներկայացնել մեծանուն գիտնականի քաղաքացիական և հայրենասիրական վարքագիծը նման ծանր պայմաններում ու մթնոլորտում՝ հենց Վրաստանի մայրաքաղաքում:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԵՐ ԵՎ ՎՐԱՑԻՆԵՐ

I

Հենց սկզբից ուզում եմ հրապարակով խոստովանել, որ վերջին ժամանակներս իմ մեջ դեպի վրացիները մտել է մի անցանկալի դառնություն, որ անշուշտ միայն իմ մեջ չէ, այլ նաև հազարավոր իմ հայրենակիցների մեջ: Եվ եթե այդ դառնությունն այսպես շարունակվի, լավ հետևանքներ չի խոստանում ոչ հայի և ոչ վրացու համար:

Բնյիցն է այդ. ի՞նչ պատահեց:

Ես անձնապես ոչ մի վրացու հետ ոչ լավ և ոչ վատ հարաբերություններ չեմ ունեցել և չունիմ: Մակավաթիվ վրացի ծանոթներս շատ կարճատև ժամանակի համար են եղել: Անձնական ուրեմն չկա մեջտեղում: Բացի այդ՝ գիտեմ, որ վրացիների մեջ ևս, անշուշտ, ինչպես ամեն ազգի մեջ, շատ սիրելի մարդիկ կան, և իբրև ազգ, ինչպես ամեն մի ազգ, վրացին ևս իր ամբողջությամբ շատ բարի է: Նա հայ ազգի համար լավ հարևան է եղել: Պոմպեոսի ժամանակից սկսած, երբ վրաց ազգը պատմության մեջ հայտ է գալիս, քսան դար շարունակ հայ և վրացի իբրև հարևան հաշտ են ապրել, երբեք պատերազմ չեն վարել միմյանց դեմ: Արդարև վրացին հային շատ էլ չի օգնել ուրիշի դեմ պատերազմի մեջ, և եթե նրանք երկուսը ստիպված են եղել մի ընդհանուր կռիվ մղել՝ շատ շուտով վրացին լքել և մենակ է թողել հային. բայց և այնպես դա պատճառ չի եղել, որ երկու ազգի մեջ թշնամություն առաջ գա: Գիտեմ և այն, որ, հակառակ մեր լրագիրների գրածներին, վրացին պատմության ընթացքում ընդհանրապես շատ քիչ սրտագին կարեկցություն է ցույց տվել դեպի հայը, դեպի հայի ազգային աղետները – խնդիրն իհարկե անհատների մասին չէ – և երբեմն նույնիսկ, երբ իրեն ավելի զորեղ է զգացել, փոքրիկ կրոնական հալածանքներ է հանել հայի դեմ. բայց և այնպես դրանով էլ չի խախտվել երկու ազգերի բարի հարևանությունը և նույնիսկ բարեկամությունը:

Դրա պատճառն այն է, որ այս երկու ազգերի կողքե կողք գոյությունը հենց միայն փոխադարձաբար պաշտպանություն է եղել միմյանց համար: Հենց այն միայն, որ Հայաստանի հյուսիսային կողմում մի Վրաստան է եղել վրացի հաշտ ազգով, հային թեթևություն է տվել իր դարավոր կռիվների մեջ այլազգիների դեմ: Այդ պատճառով էլ հայը երբեք վրացու վատը չի կամեցել իբրև ազգի, և այժմ էլ, ինչքան էլ մեր սիրտը դառնացած լինի, չենք կարող չկամենալ, որ վրաց ազգը զորանա և կազմակերպվի իբրև անկախ պետություն: Մենք չենք կարող չկամենալ այդ, որովհետև վրացու հաջողությունը և զորացումը միշտ մեզ օգուտ է:

Պարսկաստանի քրիստոնյաները հին ժամանակ հայերի համար ասում էին. «Դուք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի. հորժամ աստի վտանգ հասաներ՝ առ ձեզ անդորր ելանեաք»: Նույնը դարեր շարունակ եղել է Վրաստանը հայերի համար. երբ հարավում մահմեդականներից վտանգվել են, նրանք հյուսիսում հանգստություն են գտել: Եվ այս պատմական

իրողությունն այնպես խորը գիտակցել է հայ հասարակ ժողովուրդն անգամ, որ իր վեպի մեջ կենդանի կերպով արտահայտել է: Միրելի հերոս Սասունցի Դավիթը շրջապատված է այլազգի թշնամի փահլևաններով, որոնք նրան հարբեցնել և դավադրությամբ սպանել են ուզում: Դավիթն այդ չգիտե. նրա քավոր Գորգիզն այդ հասկացնել է ուզում նրան՝ ասելով առածավոր խոսքը, թե՛ «Ձգույշ կաց. այստեղ վնաստուն է, Վրաստուն չէ՛»: Վրաստանն ուրեմն հայի համար վնաստուն չէ եղել: Նա կարող էր այնտեղ հանգիստ լինել իր կյանքի համար: Եվ դրա համար էլ հայը միշտ բարեկամական կապով կապված է եղել վրացու հետ, միշտ պաշտպանել նրա շահերը:

Այսպես է եղել հնումը:

Բայց ի՞նչ պատահեց այժմ, որ իմ սիրտը դառնացած է դեպի վրացիները, ինձ հետ անշուշտ նաև հազարավորներ ինձ պես հայերի:

«Ժողովրդի Ձայն», 4 սեպտեմբերի 1918, - 3:

II

Ես վրացերեն չգիտեմ, որ նրանց լրագիրները կարդամ. բայց երեսուն և երեք տարի է հետևում եմ մեր լրագիրներին, իսկ մեր լրագիրները մի լավ սովորություն ունեն. այլազգի լրագիրներից նրանք քաղում են, ինչ որ ուրիշները լավ թե վատ գրում են հայերի մասին: Այսքան երկար տարիների ընթացքում, սակայն, ես շատ քիչ լավ բան եմ կարդացել վրաց լրագիրներից հայերի մասին. այլ ընդհանրապես վատ, ընդհանրապես սուր, ասելություն գրգռող և շովինիստական: Շատ անգամ զայրացել եմ մեր թերթերի աշխատակիցների վրա, թե ինչու՛ ավելի վատն են թարգմանում, քան լավը, բայց նրանք ինձ պատասխանել են, թե լավ շատ քիչ են գրում: Եվ իսկապես, հայերս այնքան շուտ տարվում ենք ուրիշի ասած մի քաղցր խոսքից, որ ամեն ինչ մոռանում ենք. ուստի և դժվար թե վրաց լրագիրները հայերի մասին լավ բան շատ գրեին, և մեր լրագիրները չթարգմանեին, կամ գոնե բովանդակությունը չհիշեին: Ռուսատառ վրացական թերթերը ինձ շատ լավ հայտնի է, թե ինչ վերաբերմունք են ցույց տվել դեպի հայերը. նույնը պիտի լինեին, անշուշտ, և նրանց ընկեր վրացերեն լեզվով թերթերը:

Այդ ամենը տարիների ընթացքում հավաքվելով մի մրուր է դրել իմ սրտի խորքում, բայց և այնպես ես լոկ զայրացել եմ դրա վրա, որովհետև գիտեմ, որ այդ ամենը ծնունդ է եղել սնանկացած-սնանկացող ազնվականների, որոնք կամ մասամբ գրգռված ռուս չինովնիկներից իրենց կոփվն այսպես կոչված «հայ բուրժուազիայի» դեմ, փոխանակ վերջինիս ուղղելու, ուղղել են հայ ազգի դեմ: Դա իմ մեջ, կրկնում եմ, լոկ զայրույթ է առաջացրել և երբեք պատճառ չի եղել սառն զգացմունքի դեպի վրացիները: Երանի թե դրությունն այդպես մնացած լիներ:

Մի տարուց ավելի է, սակայն, որ վրացի ազնվականների հին տխուր դերը դեպի հայերը մեծ ճարպիկությամբ կատարում են վրաց սոցիալ-դեմոկրատները, մի կուսակցություն, որ միջազգային պատրվակն ունի երեսին

քաշած և դրա համար էլ ավելի հեշտությամբ և համարձակ է շարժվում: Ինչ խաղ ասես, որ այդ լույս խոսքով սոցիալիստներն ու դեմոկրատները իրենց մամուլով ու վարած քաղաքականությամբ չհաղացին հայերի գլխին: Եվ այդ ամենը օրեցօր իբրև դառն կաթիլներ լցվեցին իմ սրտի մեջ և ծնեցին իմ մեջ մի զգացում, որ, խոստովանում եմ, այլևս առաջվանը չէ: Այդ զգացումը, հարկավ, դեռ շատ հեռու է անբարյացակամությունից դեպի վրացիները, բայց մի մեծ խորություն է արդեն առաջ եկել իմ մեջ, ինձ պես և հազարավոր ուրիշների մեջ, մի զգացում, որից, դժբախտաբար, ոչ հային օգուտ կա և ոչ վրացուն:

Եթե վրաց ազգի գլուխ կանգնած լինեին այս վերջին տարում նրանց նացիոնալ-դեմոկրատները և ոչ սոցիալ-դեմոկրատները, գուցե նրանց վարմունքը այնպես չէր ազդիլ հայերիս վրա, ինչպես միջազգային սոցիալիստներինը: Նացիոնալ-դեմոկրատներից վաղուց սպասում էին այդպիսի վարմունքի և նրանցից հուսախաբ լինելու բան չունեինք. բայց երբ սոցիալ-դեմոկրատ անվան տակ պարուրած շովինիստական գործ ես գտնում, և այն էլ ոչ մեկ, ոչ երկու, այլ օրեցօր, դա արդեն չի կարող սաստիկ և անտանելի չլինել:

Ես այստեղ փաստեր չեմ ուզում հիշատակել, եթե հարկ լինի, շատ շատերը կարելի է մեջ բերել: Բայց մի բան, որ լցրեց դառնության բաժակը, չեմ կարող չասել այստեղ: Անասունները նույնիսկ պաշտպանություն և հովանավորություն են գտնում մարդկանց մոտ. երբ մի թռչնիկ բազեից հալածված, իրեն ձգում է մարդու մոտ, մարդը սիրով ընդունում, գրում ու գուրգուրում է հալածված թռչնակին. բայց ի նչպես վարվեցին նրանք և վարվում են դեպի Նուխվա և Արեշի³, դեպի Ախալքալաքի փախստականները, այն Ախալքալաքի, որ համարում էին և վաղն էլ դեռ կհամարեն Վրաստանի մաս: Այդ թշվառներին փակեցին անել վանդակի մեջ և ասացին՝ թող այնտեղ կոտորվեն, և կոտորվում են նրանք Բակուրիանի ցրտության մեջ, Ալազանի անջրդի հովտում և 800-րդ վերստի վրա⁴:

Սա այնպիսի պատմություն է, որ երբեք չի մոռացվի: Ռուսաց ցարիզմը նույնիսկ, որ ասում էր, թե Հայաստանը իրեն հարկավոր է առանց հայերի, ռուսաց ցարիզմը նույնիսկ ոչ միայն այս պատերազմի ընթացքում, այլև 1890-ական թվականներին և առաջ մարդասիրաբար ընդունում էր Տաճկաստանի կոտորածներից փախածներին: Իսկ միջազգային սոցիալ-դեմոկրատները, ահա թե նրանք ինչպես վարվեցին դեռ երեկվա, այո՛, դեռ երեկվա իրենց մի պետության այն մասի ժողովրդի հետ, որ հենց իրենք էին դաշինքով զիջել թշնամուն:

Այո՛, լսվեցին վրացիների կողմից և ազնիվ վրդովմունքի ձայներ, և նույնիսկ մի վրացի պարոն հազար ռուբլի նվիրեց հոգուտ հայ փախստականների, բայց այդ նսեմանում է կատարված վատ դեպքի առաջ, որ այնքան մեծ է, որ հայի դարավոր փորձառության մեջ արագ հեղաշրջում է մտցնում: Նա վտանգված ժամանակ այլևս հարևան Վրաստանում հանգիստ չի գտնում, այլ գերեզման: Նա այլևս չի կարող ասել՝ «Այստեղ վնաստուն է, Վրաստուն չէ», որովհետև Վրաստանը նրա համար դարձել է մահվան տուն:

Եվ ոչ միայն այդ մարդկային հոգեբանությունը դրանով չի բավականանում: Նույնեցի կամ ախալքալաքցի հային կողոպտում ու կոտորում է իր դարավոր թշնամի թուրքը. նա թշնամու ձեռից փախչելով Վրաստան է ձգում իրեն, բայց երբ վրացին չի ընդունում նրան, նա վրացու դեմ ավելի է դառնանում, քան թուրքի դեմ: Եվ հասկանալի է այդ կյանքի մեջ մեզ ավելի զայրացնում է մեր սիրելի եղբոր մեր դեմ կատարած մի անիրավությունը, քան թե մի թշնամու: Թշնամու արարքը հաճախ մոռացվում է, իսկ եղբոր վատ գործը սովորաբար մինչև մահ չի մոռացվում: Հայր դարեր շարունակ Վրաստանը վնասատուն չի համարել և հանկարծ այդ եղբայր ազգից այդպիսի վարմունքի է հանդիպում: Կարո՞ղ է նա այդ մոռանալ: Կարո՞ղ է արդյոք այդ մոռանալ ախալքալաքցի հայր, որ մի օր առաջ վրացու հետ միասին հավատարմությամբ կռվում էին մի ընդհանուր թշնամու դեմ, – մի ընդհանուր երկրի, մի Ռուսաստանի, մի Անդրկովկասի համար, և ահա մի օր հետո դռները փակում են նրա առաջ և ասում, թե այստեղ Անդրկովկաս կամ Ռուսաստան չկա, այլ Վրաստան, և մենք չենք ուզում ձեզ ներս ընդունել: Այդ չի տեղավորվիլ ախալքալաքցի հայի խելապատակի մեջ: Նա գուցե կկոտորվի, կկորչի Բակուրիանում, բայց եթե նա կենդանի մնաց և վերադարձավ Ջավախք, նա իր զավակին մատուցելուց տալով կասի՝ «Ո՞րդի, այնտեղ Վրաստուն է, վնաստուն է»:

Ինչո՞ւ պիտի այսպես լիներ. ինչո՞ւ պետք է դարավոր եղբայր ժողովուրդներն այս հոգեբանական դրության հասնեին. ինչո՞ւ պետք է նրանք ընդհանուր վտանգի ժամանակ երես դարձնեին իրարուց:

«Ժողովրդի Չայն», 5 սեպտեմբերի 1918, - 4:

III

Գիտեմ վրացիներն իրենց՝ հայ զաղթականներին ներս չընդունելու վարմունքն արդարացնելու համար մի քանի բան են ասում, բայց բոլորն այնպիսի, որ ոչ մի արժեք չունին: Ասում են. 1) Փախստականները վարակիչ հիվանդություններ են տարածում: Բայց հայտնի է, որ Ախալքալաքի զավառում ոչ մի վարակիչ հիվանդություն չկար հունիսի սկիզբներին և երկար ժամանակ Բակուրիանում էլ վարակիչ հիվանդություն չկար. և եթե, գուցե, այժմ կա այնտեղ այդպիսի հիվանդություն, այդ փակված անել դրությունից, քաղցից ու ցրտից է առաջ եկել: Եվ վերջապես հայտնի է, որ խոլերան Գանձակից անցավ այս կողմերը, բայց Գանձակի ու Թիֆլիսի մեջ երթևեկությունն երբեք չընդհատվեցին:

2) Ասում են՝ վրաց պետությունն աղքատ է, չի կարող պահել մի քանի տասնյակ հազար փախստականներ: Անշուշտ, բայց վրաց կառավարությունն եթե ուզենա, միշտ էլ կարող է միայն Թիֆլիսի հարուստ հայերից մի քանի միլիոն հանել հոգուտ հայ փախստականների:

3) Ասում են՝ Վրաստանում հացն այնքան պակաս է, որ չի կարելի փախստականներին էլ կերակրել առանց տեղացիներին զրկելու: Կարծում եմ, որտեղ երկուսուկես միլիոն ժողովուրդ է կերակրվում, այնտեղ կարող էին և մի քանի տասնյակ հազար մարդիկ ևս լավ ու վատ կերակրվել: Եվ

վերջիվերջո այդ փախստականներն այժմ ևս մասամբ կերակրվում են Վրաստանից: Էլ չեմ ասում, որ եթե կարելի է Բորչալուի գավառից, որտեղ շատ քիչ վրացի կա, հացն ռեկվիզիցիայի են ենթարկել և, ինչպես հաղորդեցին լրագիրները, մասամբ ուղարկել գուրիացիներին, որոնք ոչ մի կապ չունեն բորչալուցիների հետ. – ինչո՞ւ. չէ՞ր կարելի նույն հացը ուղարկել հարևան ախալքալաքցիներին, որոնք մասամբ նույն Բորչալուի գավառում, Ծալկայում են տեղավորված այժմ:

4) Ասում են, և այսպես ասողները իրենց սրտի խորքն են բաց անում, թե հայերի Վրաստան մտնելը վնասակար է վրացիների համար, որովհետև նրանք վրաց հողերին տեր կդառնան և մի օր Վրաստանի մի մասը... Հայաստան կդառնա: Այսպես ասողները շատ խելոքությունից տառապում են: Մի թե՛ Վրաստանում հողերն անտեր ընկած են, որ հասնողը տիրանա նրանց: Եվ ո՞վ է այնքան միամիտը, որ հավատա, թե վրաց կառավարությունը վրացի գյուղացիների ձեռից հողը կառնի և հայ փախստականներին կտա:

5) Ասում են՝ Վրաստանի համար ցանկալի չէ, որ հայ տարրը գորանա այնտեղ: Շատ լավ. բայց այդ դեպքում ինչո՞ւ Ախալքալաքի գավառը, ուր մոտ ութսուն հազար հայերի դիմաց մի քանի հազար վրացի միայն կար, Վրաստանի հետ միացնել էին ուզում: Ինչո՞ւ, գերմանական սվիսների վրա հենված, հրատարակեցին, թե Վրաստանին են միացնում Բորչալուի գավառը, ուր վրացի գրեթե չկա, այլ մեծ մասամբ հայ: Ինչո՞ւ նույնիսկ Ալեքսանդրապոլի և Ղազախի գավառներին ձեռնամուխ լինել ձգտեցին: Եվ վերջապես ինչո՞ւ չեն հրաժարվում Թիֆլիս քաղաքից և Թիֆլիսի գավառի հարավային մասից, ուր համեմատաբար քիչ են վրացիները: Եթե հայ տարրը ցանկալի չէ նրանց, թող չմտածեն այն երկրամասերի վրա, որոնք սկզբից ի վեր Հայաստանի գավառներն են եղել, և որոնց մեջ, ինչքան էլ մի ժամանակ ընկել են վրաց իշխանության տակ, մինչև այժմ էլ գերիշխող է հայ տարրը, իսկ վրացի կամ չկա բնավ, կամ խիստ սակավաթիվ: Թող հայերի պահանջած ազգագրական հիմքն ընդունեն սահմանների համար, և այն ժամանակ մեր հարևաններն իրոք բավական կազատվեն իրենց համար անցանկալի հայ տարրերից: Թե չէ՛, փախստականների առաջ դռները փակելով՝ նրանք չեն պրծնիլ այդ հայերից: Քանի որ Վրաստանի հարավային կողմում հարյուր հազարավոր հայեր կան, փախստականները, դռները փակած գտնելով, պատուհաններից ներս կմտնեն:

6) Ասում են, և այս արդարացումը ես կարդացել եմ մի սոցիալիստական թերթի մի հոդվածի մեջ, որի վերնագիրն էր «Կո՛ւպիպվիօպ» – ասում են՝ հայերին օգնել և անօգուտ է և վտանգավոր: Անօգուտ է, որովհետև հայ ազգը կորստի է դատապարտված, միննույն է նա չի փրկվելու: Նախ՝ մենք մեր մասին այդպես չենք մտածում: Այո՛, ճշմարիտ է, հայ ազգն այժմ շատ է խորտակված. բայց նա շատ անգամ է անցել նման արհավիրքների բովից, և ամեն անգամ էլ կորստից ազատվել է:

Եվ մենք հավատում ենք մեր բանաստեղծի հետ, որ այժմ էլ

«Իբրև փյունիկ նա կհառնե անշուշտ մի օր»,

«Եվ դու կտեսնես չքնաղ ապարանք

Այնտեղ, ուր հիմա տեսնում ես աճյուն»...

Բայց թողնենք հայ ազգի մասին. Կարսն առանց որևէ պայմանի թշնամուն հանկարծակի հանձնելուց հետո՝ մենք չենք էլ մտածում, որ հայ ազգին օգնեն: Խնդիրը փախստականների մասին է: Մարդիկ նույնիսկ մեռնողին վերջին դեղն են տալիս, իսկ մեր հին բարի հարևանները հայ փախստականներին օգնելն ավելորդ են համարում...

Բայց ինչո՞ւ հայերին օգնելը վտանգավոր են համարում: Դժբախտաբար սոցիալիստական թերթն այդ չէր բացատրած: Վտանգավոր է, երևի քաղաքական տեսակետից. երևի, տաճիկներին չգրգռելու համար. երևի, հայերին կոտորող Անդրկովկասի մահմեդականներին հաճելի լինելու համար...

Բայց այս մասին կդառնամ ուրիշ անգամ:

«Ժողովրդի Չայն», 6 սեպտեմբերի 1918, - 5:

IV

Վրաց կառավարության օրգանը՝ «Սաքարթվելոս Ռեսպուբլիկան» խոսելով ազգային փոքրամասնությունների քաղաքական իրավունքների մասին Վրաստանում, գրում է.

«Ստացված են տեղեկություններ, որ Արարատյան Հանրապետության հպատակներ հրատարակեցին իրենց բոլոր այն հայերը, որոնք Վրաստանում են ապրում: Բացի փախստականներից մեզ մոտ բնակվում են 200.000-ից ավելի հայեր... Ընդունելի՞ է պետական տեսակետից, որ մեր փոքրիկ հանրապետության մեջ ապրեն այդքան բնիկ հայեր... և մեր պետության հպատակներ չլինեն»:

Մի պաշտոնական լրագրից շատ ավելի խստապահանջ է ընթերցողը, քան մի մասնավոր թերթից: Ուստի թույլ ենք տալիս մեզ հարցնել. ե՞րբ են ստացվել այդ տեղեկությունները հայերի հպատակության մասին և ի՞նչ ճանապարհներով, ի՞նչ հանձնաժողովների միջոցով են ձեռք բերվել դրանք:

Այս մասին, որքան գիտենք, լրագիրներում ոչ մի բան չկար գրված, և հայ հասարակությանն էլ ոչինչ հայտնի չէ:

Մենք միայն այն գիտենք, որ պետական դպրոցներում սովորող ոչ-վրացի աշակերտների ծնողներին հարց տվին, թե վրաց պետության հպատակ են, թե ոչ: Այդ հարցն էլ այնպիսի անորոշ ձևերով արվեցավ և պատասխանն էլ այնքան շուտափույթ էր պահանջվում, որ շատերը չէին հասկանում, թե ի՞նչ պատասխանեն. որովհետև իրենք էլ չգիտեին, թե արդյոք վրաց տերության հպատակ են, թե ոչ: Մի այդպիսի հարց էլ տրվեցավ պետական դպրոցների ուսուցիչներին ընդհանրապես:

Մի կողմ թողնելով այն, որ շատ ծնողներ կարող էին բացակա լինել Թիֆլիսից, կարելի՞ է արդյոք այդպիսի հարցումներից, այդպիսի տեղեկություններից եզրակացնել, թե Հայաստանի հպատակներ հայտարարեցին իրենց Վրաստանում ապրող բոլոր հայերը, այն էլ բնիկ հայերը:

Ուրեմն էլ ոչ մի հայ չկա՞, որ վրաստանցի լինի, այսինքն իրեն Վրաստանի հպատակ համարի կամ ուզենա լինել: Դրանով արդեն հեշտությամբ

լուծվում է ազգային փոքրամասնությունների, այս դեպքում Վրաստանի հայերի քաղաքական իրավունքների խնդիրը:

Եթե այդպես է, հայերն էլ ոչ մի իրավունք չունեն դժգոհ լինելու, թե ինչո՞ւ երեքուկես ամիս է, որ Վրաստանի դեմոկրատիկ հասարակապետությունը գոյություն ունի, և իրենք կատարելապես զրկված են որևէ քաղաքական իրավունքից այդ հասարակապետության մեջ և իրենց բախտն ու ճակատագիրը տնօրինում են իրենց բարի հարևաններն իրենց Վրացական Ազգային Խորհրդով:

Բայց բանն էլ այն է, որ այդպես չէ: Դժվար թե ոչ միայն բոլոր, այլև շատ բնիկ վրաստանցի հայեր իրենց հայտարարած լինեն Հայաստանի հպատակներ. այդպիսիների թիվը անպայման մեծ չէ: Ընդհակառակն, ես գիտեմ ու ճանաչում եմ հայեր, որոնք բնիկ վրաստանցի չեն, բայց կուզեին Վրաստանի հպատակ լինել:

Սակայն այդպիսիների ցանկությունը, լոկ հայտարարությունը միայն բավական է արդյոք, որ նրանք Վրաստանի հասարակապետության քաղաքացիներ համարվեն: Մի տերության քաղաքացի լինել-չլինելը ենթակայական է, սուբյեկտի վճարն է, թե՞ կախված է որևէ օրենքից: Կա՞ արդյոք օրենք հպատակության մասին:

Որքան գիտենք, միայն այն հրատարակվեց, թե ով որ մինչև 1914 թ. հունիսի 19 գրված է Վրաստանում որևէ վարչական մասում, որ հետո բացատրվեց որևէ դասակարգի մեջ, նա Վրաստանի հպատակ է: Կնշանակե, Վրաստանի քաղաքացի լինելը մի առարկայական բան է և կախված չէ սրա կամ նրա անձնական հայտարարությունից, թե ինքը Վրաստանի կամ Արարատյան հանրապետության հպատակ է:

Հաշվեցեք ուրեմն Վրաստանում ապրող բնիկ հայերին, կազմեցեք նրանց ցուցակները, անձամբ դիմելով նրանց և ճիշտ տեղեկություններ պահանջելով, և այն ժամանակ կտեսնեք, որ շատ քչերը կլինեն, որ կհրաժարվեն Վրաստանի քաղաքացի լինելուց:

Եվ ինչո՞ւ պետք է բնիկ վրաստանցի հայր, որ իր հողն ու ջուրը, իր տունն ու տեղը, իր բան ու գործը ունի այնտեղ, չցանկանա Վրաստանի քաղաքացի լինել:

Այո՛, ինքնաճանաչ հայի համար, ռուսական մեծ հեղափոխությունից հետո, շատ դժվար է Վրաստանում, Վրաստանի դեմոկրատիկ հանրապետության մեջ տեսնել իրեն նույն վիճակի մեջ, որ ուներ ռուսական ցարիզմի օրով, զրկված որևէ քաղաքական իրավունքից: Այո՛, դրանից շատ դառնացած է ինքնաճանաչ հայը, – բայց մենք լավ գիտենք, որ միշտ այդպես չի մնալ, մի օր վերջապես Վրաստանի բնիկ հայն էլ վրացուն հավասար քաղաքական և ազգային իրավունքներ կունենա և նա ինքը կլինի իր բախտի տնօրինողը:

Այս բանին խորը համոզված պիտի լինի ամեն մի հայ: Վրացին եթե ուզենա էլ, չի կարող մեզ զրկել մեր քաղաքական և ազգային իրավունքներից Վրաստանում:

Եթե հասարակապետության ա-ռաջին ամիսներում մենք զրկված ենք նրա գործերը և քաղաքականությունը վարելու իրավունքներից, հավատացած ենք, որ դա լուրջ մի ժամանակավոր հիվանդագին երևույթ է, որից, անշուշտ, կարող էին սոցիալ-դեմոկրատները հենց սկզբից խուսափել, բայց չարին այդ Ավելի ևս վատ իրենց սոցիալ-դեմոկրատների համար:

Բայց եթե նրանք այսուհետև էլ կշարունակեն իրենց այդ քաղաքականությունը, եթե Վրաստանի հանրապետությունը երկարատև կթողնեն նույն հիվանդագին դրության մեջ, դա կդառնա մի չարիք ոչ միայն հայերի, այլև Վրաստանի համար:

Արդեն անցել են այն ժամանակները, երբ մի ազգ մի ուրիշ ազգի կարող էր պահել ճորտական վիճակի մեջ: Ազատության, ազգային ինքնորոշման համը մի անգամ ճաշակելուց հետո՝ այսուհետև ոչ մի ազգային փոքրամասնություն թույլ չի տալ, որ իրեն հետ խաղ անեն – լինեն նրանք վրացիները, թե թվով և ուժով շատ ավելի մեծ ուրիշ ազգեր:

Մեր բարի հարևանները, անշուշտ, շատ լավ գիտեն, որ հայերն այն ազգը չեն, որ դարեր շարունակ տաճկական բռնապետության դեմ մաքառելուց և այսօրվան օրերին հասնելուց հետո՝ այժմ պետք է հրաժարվեն հանրապետության մեջ իրենց արդար իրավունքից:

Եթե երեք ամսից ավելի է՝ լռում ենք և իրավունքների պահանջներ չենք դնում, այդ նախ՝ նրա համար է, որ մեր ազգային տառապանքներն այժմ մեկը չեն, երկուսը չեն. ապա՝ և նրա համար, որ չենք ուզում հենց սկզբից դժվարություններ հանել վրաց մատաղատի հասարակապետության համար: Այս բանին պետք է հավատան մեր հարևանները և դրան համոզված պիտի լինեն: Եթե հայերի մեջ կան բոլշևիզմով տարվածներ, որ հակառակ են Վրաստանի անկախության, նույնը կան և վրացիների մեջ: Բայց հայության ամբողջությունը, – լինին բնիկ՝ վրաստանցիներ թե հայաստանցիներ, – նրանք միայն Վրաստանի գորացումն ու բարգավաճումն են ցանկանում. որովհետև դա միանգամայն մերն է, մի պայմանով միայն, որ մենք չլինենք այս երկրում իրավագուրկ և խորթ:

«Ժողովրդի Ձայն», 14 սեպտեմբերի 1918, - 12:

V

Քաղաքական և ազգային իրավունքներ Վրաստանում մեզ պիտի տրվին անպայման հավասար վրացիներին: Դեմոկրատիկ հասարակապետության մեջ չի կարող լինել իշխող և իշխված ազգ: Հասարակապետության գործերը վարող խորհրդի մեջ մենք պիտի ունենանք մեր թվին համապատասխան տեղ ու ձայն:

Քանի՞ է հայերի թիվը:

Վրաստանի պաշտոնական թերթը գրում է. «Բացի փախստականներից, մեզ մոտ բնակվում են 200,000-ից ավելի հայեր... բնիկ հայեր»: Եթե այդքան բնիկ

հայեր կան Վրաստանում, այդ թվի համապատասխան էլ տեղ պիտի ունենան հայերը Վրաստանի Խորհրդարանում:

Մենք չգիտենք պաշտոնական օրգանը ո՞ր աղբյուրից է հանել այս թիվը, բայց ճիշտ է, որ բացի՝ փախստականներից Վրաստանում կան այդ թվից ավելի և բավական ավելի հայեր, բայց դրանք բոլորը բնիկ չեն: 1914 թվի Կովկասյան օրացույցի հաշվով, երբ փախստականների մասին խոսք լինել չէր կարող, հայեր բնակվում են՝

1. Քուրայիսի նահանգում 7662 հոգի, որոնցից բնիկներ (ՍՏԸպվԿՍպ վՈրպսպվՈւպ)՝ 4652 հոգի, ժամանակավոր ապրողներ՝ 3010 հոգի:

2. Թիֆլիսի նահանգում, առանց Ախալցխայի, Ախալքալաքի և Բորչալուի գավառների, 210, 916 հոգի, որոնցից բնիկներ՝ 161, 367 հոգի, ժամանակավոր ապրողներ՝ 49, 549 հոգի:

3. Սուխումի շրջանում 17, 668 հ<ոգի>, որոնցից բնիկներ՝ 5189 հ<ոգի>, ժամ<անակավոր> ապրող<ներ>՝ 12, 499 հոգի: Ընդամենը 236, 246 հոգի, որոնցից բնիկներ՝ 171, 208 հ<ոգի>, ժամ<անակավոր> ապրողներ՝ 65, 038 հոգի: Ժամանակավոր ապրողների մոտ կեսը, գուցե ավելի կամ պակաս, պետք է ենթադրել, որ Վրաստանից են տեղափոխված մի տեղից մյուս տեղ, իսկ կեսը Հայաստանից և ուրիշ կողմերից. որով Վրաստանում իսկապես 200, 000-ից ավելի բնիկ հայեր կան:

Այդ թվի մեջ չի հաշված, սակայն, Բորչալուի գավառի հայությունը, թվով 75, 000 հոգի, որոնցից բնիկներ՝ 72, 002 հ<ոգի>, ժամ<անակավոր> ապրողներ՝ 2, 998 հ<ոգի>: Եթե Բորչալուի գավառից մաս հասնի Վրաստանին, ուրեմն բնիկ հայության թիվն ավելի ևս կմեծանա այնտեղ, իսկ ընդհանրապես հայերի թիվը, չհաշված փախստականները, 200,000-ից շատ ավելի մեծ է:

Փախստականները, վաղ թե ուշ, անպայման պիտի վերադառնան իրենց տեղերը և իրենց հողին ու ջրին տեր դառնան: Բայց ինչպես վերևում դրած վիճակագրությունից երևում է, Վրաստանում կան նաև մի քանի տասնյակ հազար հայեր, որոնք բնիկ տեղացի չեն և պատերազմից առաջ գործով ժամանակավորապես ապրում էին և ապրում են այնտեղ: Թե բնիկները, սակավ բացառությամբ, Վրաստանի քաղաքացի կմնան, դրան համոզված եմ: Բայց թե ոչ-բնիկները, որոնք ժամանակավորապես ապրում են Վրաստանում, սակավ բացառությամբ, չեն կամենում և չեն կամենալ Վրաստանի հպատակ դառնալ, դրան էլ եմ ես համոզված:

Եվ մի երևանցի կամ շուշեցի հայի, որ պատերազմից առաջ գործով Թիֆլիս է եկել ժամանակավորապես, ո՞վ կարող է ստիպել և ասել, թե ինչո՞ւ նա Վրաստանի հպատակ չի դառնում: Չի դառնում, որովհետև դրա համար նա իր շատ պատճառներն ունի:

Եվ վերջապես, դիցուք, մի երևանցի կամ շուշեցի հայ այս րոպեիս ցանկանում էլ է Վրաստանի հպատակ դառնալ, կա՞նք նրա համար օրենքներ, և համաձայնություններ Վրաստանի և Հայաստանի կամ Ղարաբաղի հանրապետությունների մեջ (չէ՞ որ Ղարաբաղն էլ այժմ իրեն անկախ հանրապետություն է

հրատարակել)։ Ի՞նչ կերպ, ի՞նչ միջոցներով նա պիտի դուրս գա Հայաստանի կամ Ղարաբաղի քաղաքացիությունից և Վրաստանի քաղաքացի դառնա։

Եվ վերջապես շուշեցին գիտե՞՞, թե վաղը Ղարաբաղը ի՞նչ վիճակ կունենա։

Տեսնում ենք, որ հպատակություն փոխելու խնդիրն այժմ հարուցանելը բռնադատվին անժամանակ է և ոչ մի դրական հետևանքի չի հասնիլ նա։

Անշուշտ, չի կարելի, որ մի պետության մեջ ապրեն բնիկ հայեր և չլինեն այդ պետության հպատակներ։ Պա արսուրդ է։ Եթե բնիկ են, ուրեմն և հպատակներ պիտի լինեն և պիտի մասնակցեն պետության գործերին։

Բայց կարելի է և պետության տեսակետից ոչ միայն ընդունելի է, այլ շատ անգամ նույնիսկ ցանկալի է, որ մի փոքրիկ հանրապետության մեջ ապրեն ոչ-բնիկներ։ 1888 թվին Շվեյցարիայում մոտ 2,800,000 բնակիչներից 229,650 օտարերկրացիներ էին, և Շվեյցարիան դրանից միայն օգտվում էր։ Իսկ Վրաստանում 1913 թ. բնակվում էին, ըստ Կովկասյան օրացույցի, մոտ 65,000 ժամանակավոր այս կամ այն տեղերում ապրող հայեր, որոնց կեսը, գուցե ավելի կամ պակաս, պետք է ենթադրել թե բնիկ վրաստանցի են, ինչպես վերևում գրեցի։ Ըստ այսմ Վրաստանում մնում են մոտավորապես 30-40 հազար ոչ-բնիկ հայեր, այն էլ մեծ մասամբ Թիֆլիսում։

Եվ պետք է լավ իմանան մեր հարևանները, որ այդ ոչ բնիկ հայերը որ 1913 թ. կային Վրաստանում, հետագայում թվով շատ պիտի պակասեն։ Նրանք Վրաստան մտել են այն ժամանակ, երբ այդ երկիրը ռուսաց մեծ պետության մի մասն է եղել, և իրենք, այդ հայերը նույն պետության հպատակներ. ուրեմն և կարող էին ազատ կերպով մի տեղից մյուս տեղը շարժվել։

Դրանց գրավել է ոչ թե Վրաստանը, այլ այն հանգամանքը, որ Թիֆլիսն եղել է Կովկասի կեդրոն։

Բայց երբ պատերազմը վերջանա, եթե հաստատվեն Անդրկովկասի երեք հանրապետությունները, Թիֆլիսը պիտի կորցնի իր նախկին նշանակությունը Կովկասի ժողովուրդների համար և, լինելով մի օտար փոքրիկ պետության կեդրոն, նա շատ էլ չպիտի գրավի Կովկասի ժողովուրդներին։ Այն ժամանակ ոչ թե ոչ-բնիկները մեծ մասամբ կհեռանան այնտեղից, այլ կարող է պատահել, որ բնիկներն էլ մասամբ թողնեն այդ քաղաքը։

«Ժողովրդի Չայն», 15 սեպտեմբերի 1918, - 13:

VI

Անցած 1917 թ. հուլիս ամսին, հեղափոխական միտինգների եռուն շրջանում, Ցազվերիում ծանոթացա մի վրացի նացիոնալ-դեմոկրատի հետ։ Մի օր նա իմիջիայլոց ասաց ինձ. «Մեզ ասում են, թե ձեր քաղաքականությունը, թուրքերի հետ դաշնակցությունը, բերում է տաճիկներին Անդրկովկաս։ Տաճիկները գալիս են, թող գան. մենք նրանցից չենք վախենում»։

Ես իմ խոսակցից չիմացա, թե այդպես ասողներն ո՞վ են եղել, հայե՞՞ր, թե վրացիներ։ Երևի, և հայեր, և վրացիներ, բայց ավելի հայեր։

Ես այն ժամանակ չէի կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է, որ վրացիները չվախենան տաճիկներից. չէ՞ որ այդ հակասում է ամբողջ պատմությանը:

– Տաճիկներից դուք էլ, մենք էլ, իհարկե, չենք վախենում, – պատասխանեցի ես իմ խոսակցին. – չէ՞ որ Ռուսաց հաղթող և հեղափոխական զորքերը պինդ կանգնած են Երզնկայից և Տրապիզոնից դենը: Բայց եթե հաջողությունը հանկարծ անցնի տաճիկների՞ կողմը...

– Այն ժամանակ էլ մենք չենք վախենում տաճիկներից, – պատասխանեց նա. – որովհետև մենք տեղացի թուրքերից չենք վախենում, նրանց հետ բարեկամ ենք:

Ես իմ խոսակցին չկարողացա հակառակը համոզել: «Ըստ երևույթին սահմանափակ ուսման տեր լինելով՝ պատմությունը նշանակություն չի տալիս», – մտածեցի ես: Բայց այժմ, երբ տաճիկներն ու գերմանացիներն Անդրկովկասում են, այժմ միայն հասկանալի է, թե ինչու վրացի նացիոնալ-դեմոկրատը մի տարի առաջ դեռ տաճիկներից չէր վախենում:

Նա դրա համար կանխապես հոգացել էր և Կ. Պոլսում և Բեռլինում: Միամիտ պիտի լինի մարդ, եթե կարծի, թե գերմանական սվինների Վրաստան ներս մտնելը զույս եկավ հանկարծ այս տարվա մայիսի վերջը, երբ Ժորդանիան Բաթում գնաց կամ մի քանի օր հետո, մայիսի 28-ին, Փոթիում: Ո՛չ, այդ ժամանակ միայն այն կատարվեց, որ սոցիալ-դեմոկրատները յուրացրին նացիոնալ-դեմոկրատների քաղաքականությունը:

Հիշենք միայն պատերազմի սկիզբներում Վիցեից Բեռլին ուղարկված հեռագիրը, որ բռնված լինելով՝ հրատարակեց Պետրոգրադի հեռագրական գործակալությունը. հիշենք միայն, թե այդ հեռագիրն ինչ աղմուկ հանեց, վրացիներն այդ պրոպոկանդիա համարեցին, բայց միաժամանակ շտապեցին Պետրոգրադ մարդիկ ուղարկել և բանը հարթել, ու հարթեցին: Հիշենք և այն թղթակցությունը Պոլսից, տպված «Հորիզոնի» մեջ, դեռևս այն ժամանակ, երբ տաճիկները չէին մտել այս մեծ պատերազմի մեջ: Թղթակցիցը, Խաժակը, որի վիճակի մասին այն օրից դժբախտաբար ոչ մի տեղեկություն չունենք, շատ լավ տեղյակ Կ. Պոլսի անցուդարձի մասին, այն ժամանակ արդեն գրում էր տաճիկների և ինչ-որ վրացիների համաձայնության մասին... Բայց վրացիներն այդ պրոպոկանդիա համարեցին հայերի կողմից՝

Այժմ արդեն պարզ է, թե ինչու իմ խոսակցից նացիոնալ-դեմոկրատն ասում էր, թե իրենք տաճիկներից չեն վախենում:

Որ պատերազմի անհայտ վախճանը նկատի ունենալով՝ վրացի նացիոնալ-դեմոկրատներն իրենց ապահովել էին առաջուց, այդ մասին, հարկավ, ոչինչ չունենք ասելու: Թուրքերեն առածն ասում է. «Ուղտը մոտիկը կարածի, հեռուն մոիկ կտա»: Վրացիներն այդ առածին էին հետևել:

Բայց ինչպե՞ս էր, ի՞նչ դաշնակցությամբ էր, որ նրանք տեղացի մահմեդականությունից էլ չէին վախենում, և վաստակել էին նրա բարեկամությունը, այն աստիճանի, որ վագոնների մեջ հայ որսացող զազանները վրացիների մի մագին անգամ չէին դիպչում: Դա մեզ համար խրատական է՞:

«Ժողովրդի Ձայն», 19 սեպտեմբերի 1918, - 16:

VII

Վրաց նացիոնալ-դեմոկրատներն այս վերջին ամիսներին մի երկու անգամ ծաղրեցին հայերի քաղաքական կարճատեսությունը, ավելի ճիշտ, հայերի քաղաքագիտությունից զուրկ լինելը: Մերոնք այս մասին հիշելով՝ միայն հեզնաբար վերաբերվեցին, թե քաղաքագիտության շնորհքը, երևի, միայն նրանց է տրված: Բայց որ նացիոնալ-դեմոկրատների կարծիքի մեջ կա ճշմարտություն. որ վերջին տասնամյակներում քաղաքական գործերի մեջ վրացիները մեզնից բարձր են կանգնած եղել, այդ հերքել չենք կարող:

Ի՞նչ պիտի լիներ, օրինակ, այս պատերազմի միջոցին, մեզ նման փոքր և մեր դրությունն ունեցող ազգերի քաղաքականությունը, եթե ոչ հեռատեսել գալիք վտանգները, աշխատել նրանց առաջն առնել, միաժամանակ և բարվոքել ազգի քաղաքական դրությունը: Եվ վրացիները այդպես էլ վարվեցին. նրանք տաճիկների ու տեղական թուրքերի բարեկամության մասին առաջուց հոգալով և գերմանական հովանավորությունը վայելելով՝ կարողացան մինչև այժմ ոչ միայն իրանց ազգի ֆիզիկական գոյությունն ու տնտեսական վիճակն ապահովել, այլև նույնիսկ իրանց երկրի անկախությունն ու ամբողջությունը: Իսկ ի՞նչ է մեր վիճակն այժմ:

Գիտեմ, ինձ կառարկեն Վրաստանի և Հայաստանի աշխարհագրական դիրքերի տարբերությունը և մի քանի ուրիշ հանգամանքների հետ նաև այն, որ Վրաստանն ամբողջ գտնվում էր մի տերության մեջ, իսկ մենք բաժանված էինք երկու կոմոդ տերությունների մեջ. որ պատերազմը մեր երկրում էր տեղի ունենում. որ մեր հարաբերությունները սրված էին Տաճկաստանի և տեղական թուրքերի հետ, որոնց հետ խառն ապրում ենք. որ Տաճկա-Հայաստանի ավտոնոմիայի խնդիր կար մեջտեղում...

Բայց այդ ամենը չի արդարացնում մեր քաղաքական անհեռատեսությունը. այլ, ընդհակառակն, հենց այդ հանգամանքների պատճառով մենք ավելի զգույշ պիտի լինեինք, քանի որ մեզ ավելի մեծ վտանգ էր սպառնում, քան վրացիներին: Բայց վրացիներն զգույշ եղան, իսկ մենք ո՛չ:

Մերոնք պատերազմի սկզբում տաճիկների առաջարկությունը՝ համաձայնության գալ՝ մերժեցին, երևի, ասպետական հպարտությամբ, - մի պատմություն, որ, սակայն, դեռ լավ չի պարզված: Ինչո՞ւ այսպես: Նախ՝ նրա համար, որ ռուսական ազդեցությամբ, կարծես, արևելքում մեզ համար Հայաստան գոյություն չուներ, և Հայաստանը միայն տաճկաց պետության սահմաններում էր: Ապա՝ այն պատճառով, որ մեր քաղաքականության վարիչները մտքով անգամ չէին անցկացնում, թե կարող է հաղթվել հզոր Ռուսաստանը, թեպետ շատ անգամ էինք կարդացել, թե եվրոպացի քաղաքագետները միապետական Ռուսաստանն անվանում են «կավե ոտներով մի կոլոս», որ ամեն ժամ կարող է փշրվել ու կործանվել:

Մինչդեռ մեր կողքին վրացիները, մի հարկի տակ հավաքված լինելով, միայն իրանց ազատության հոգն էին տանում, մենք մեզ մոռանալով՝ միայն Տաճկա-Հայաստանը գրավելու մասին էինք մտածում. իսկ եթե այնտեղ ավտոնոմիա չստանանք, ասում էինք, շատ-շատ, Հայաստանի այն մասն էլ կմիանա Ռուսաստանին՝ և վերջացավ:

«Բայց եթե հաջողությունը հանկարծ անցնի տաճիկների՝ կողմը»... Վրացի նացիոնալ-դեմոկրատը կարող էր ասել. «Այն ժամանակ էլ տաճիկներից չենք վախենում», իսկ մենք այն ժամանակ միայն խուճապի և փախուստի կղիմեինք: Ինչո՞ւ: – Որովհետև թեպետ քաղաքագիտության ճանապարհը շատ ոլոր-մոլոր է, բայց մենք մանվածապատ մտածել չգիտենք, մենք միայն մի ուղիղ գիծ բռնած՝ գնում էինք և դրանից դուրս բան չէինք տեսնում:

Որ վրացիները քաղաքականության մեջ մեզնից համեմատաբար հմուտ են, դա նրանից է առաջ գալիս, որ նախ՝ նրանք ավելի երկար են պահել իրանց քաղաքական ազատությունը, ուրեմն և քաղաքականորեն մտածելու և գործելու ընդունակությունը. ապա՝ որ գլխավորն է, նրանք ունեն ազնվականություն, որից ծագում է մեծ մասամբ, ինչպես ասում են, նույնիսկ նրանց սոցիալիստ ինտելիգենցիան: Իսկ ազնվականությունն այն դասակարգն է, որ պատմականորեն վարելով իր երկրի քաղաքականությունը՝ սերնդեսերունդ վարժվում է՝ այդ արվեստի մեջ, և նույնիսկ շատ ընտանիքների մեջ ժառանգաբար պահվում է քաղաքականորեն մտածելու և գործելու ունակությունը:

Մեր ազնվականությունը շատ վաղուց է մեռած. բայց և այնպես քանի դեռ մեր քաղաքականության դեկը մնում էր հին ազնվականության մնացորդների, մեյլիքների ու քալանթարների և բարձր հոգևորականության ձեռին, նրանք դարձյալ որոշ չափով զգույշ և շրջահայաց էին. որովհետև դեռ իրանց մեջ պահում էին հին քաղաքական ավանդությունները: Այդ դասակարգերը, սակայն, շուտով ընկան և կորցրին իրանց ազդեցությունը. ուստի և նրանց քաղաքական ուղղությունն էլ հետզհետե թուլացավ, թեպետ և իբրև մի քաղաքական հոսանք ինտելիգենցիայի որոշ մասի մեջ էլ հարատևեց մինչև 1880-ական թվականները: Դա հին պահպանողական ուղղությունն էր, որ, իմիջիայլոց, Տաճկա-Հայաստանի նկատմամբ քարոզում էր բարեկամություն Օսմանյան պետության հետ:

1880-ական թվականներից սկսած մեր ազգային քաղաքականության դեկն անցավ ամբողջապես նոր ինտելիգենցիայի ձեռքը և կտրվեց հին ավանդություններից: Իսկ մեր այս ինտելիգենցիան, ազգային գործերով հետաքրքրվող ինտելիգենցիան, ծագում է մեծ մասամբ հասարակ գյուղացիներից, հաճախ անգրագետ ծնողներից, մասամբ քահանայական դասից, մանր առևտրականներից ու արհեստավորներից. ուրեմն այնպիսի միջավայրից, որ շատ հեռու է քաղաքականությունից: Այդ պատճառով, ինչքան էլ մեր ազգային քաղաքականությունը վարող ինտելիգենտներն ուսում առած լինին, նրանք իրանց հոգեբանությամբ դեռ հաճախ տուկ գյուղացի կամ արհեստավոր են, իրանց մեջ պահում են դեռ գյուղացու կամ արհեստավորի պարզամիտ ոգին:

Շատ հասկանալի է, որ այսպիսի սի ինտելիգենցիան գուրկ պիտի լիներ քաղաքագիտության շնորքից: Մի թե այս չէ պատճառը, որ մեր քաղաքագետները մի ուղիղ գիծ բռնել գնում էին առանց աջ ու ձախ նայելու. որ մեր ինտելիգենցիան, քաղաքականության մեջ խամ ու խակ լինելով, ինչպես մի պարզամիտ գյուղացի հեշտությամբ հավատում էր և դեռ հավատում է ուրիշներին և միշտ հուսախաբ լինելով՝ դարձյալ չի կարողանում հարմարվել ժամանակին և որն է ճկունություն ցույց տալ քաղաքականության բարդ արվեստի մեջ:

Մյուս կողմից, մեր դժբախտությունն այն է, որ երկար ժամանակ զրկված լինելով ազգային ինքնություն քաղաքական կյանքից՝ միաժամանակ վերջին տասնամյակներում ցարիզմի հալածանքի պատճառով զրկված էինք և Ռուսաց պետության մեջ քաղաքական ասպարեզում բարձրանալու հնարավորությունից, որով և մենք չունենք քաղաքականորեն պատրաստի մարդիկ: Վրացիներն այս կողմից ևս ավելի բախտավոր են: Եթե կային հատուկենտ հայազգի բարձր պաշտոնյաներ էլ, նրանք էլ ըստ առածին. «Ոչ հայի խունկ էին, ոչ թուրքի սպանդ»: Նրանք այնքան հեռացած ու խորթացած էին հայությունից, որ ամենից քիչ հայության համար կմտածեին: Գամառ-Քաթիպան շատ լավ բնորոշել է մայրաքաղաքի այդ այլասերված պարոններին, ինչպես և առհասարակ մեր հարուստների որդիներին.

«Տեղը եկավ՝ հայ է նա,
տեղը եկավ՝ այլազգի».
Իրոք ոչ այդ և ոչ այն է,
այլ ծնունդ մի նոր ազգի»:

Մեջտեղում մնում էր ուրեմն դարձյալ միայն միշտ վերևում նկարագրված ինտելիգենցիան իր քաղաքական շիտակ գծով և պարզամտությամբ:

Այս միևնույն ոգու պատճառով վերջին տասնամյակներում մեր կրթությունն ընդհանրապես այնպես էր տարվել, և մեր գրականությունն ու մամուլը ամենամեծ մասամբ այնպես էին առաջնորդել մեզ, որ ոչ միայն մեր քաղաքականության վարիչները Տաճկաստանի հետ համաձայնության գալ չէին կարող, այլ, ընդհակառակն, մեր ինտելիգենցիայի ստվար, նույնիսկ իշխող մասը, անխուսափելի կերպով դուրս պիտի գար Տաճկաստանի դեմ, և կամավորական գնդեր պիտի կազմեինք, և այդ գնդերը պատերազմի մեջ գործունյա մասնակցություն պիտի ունենային:

Մեր ազգային քաղաքականությունը վարող ինտելիգենցիան չափազանց պարզամիտ գտնվեց, այն աստիճանի, որ նույնիսկ Տաճկաստանի մեծ դաշնակցի՝ Գերմանիայի նկատմամբ էլ անհոգ գտնվեց և չհետևեց մեր հարևաններին, թեպետ և Գերմանիայում սովորած մարդիկ մենք շատ ավելի ունենք, քան վրացիները, և մեր ազգային կրթությունը, գրականությունը, մամուլը ավելի է ենթարկված Գերմանիային և նույնիսկ մինչև պատերազմը հիմնված էր Գերմանիայում Գերման-Հայկական ընկերությունը ընդարձակ ծրագրով:

Քանի որ մեր քաղաքականությունը վարում էին գյուղի գավակները, հետևանքը բնականաբար այն պիտի լիներ, ինչ որ եղավ: Բնականաբար գյու-

դացի բանաստեղծը ներկայանալով գերմանական միսիայի պետին՝ նրան պիտի կարողանար ասել միայն, թե մենք ձե՛զ չէինք սպասում, որ Կովկաս գաք, բայց դո՛ւք եկաք: Դա մի այնպիսի խոսք է, որ իր չափազանց միամտությամբ արդեն բնորոշում է մեր գեղջուկ քաղաքականությունը: Դրա հետ համեմատության դրեք Ժորդանիայի խոսքը՝ ուղղված գերմանական ներկայացուցչին, և այն ժամանակ կտեսնեք, թե վրացիները ո՛րքան ավելի հմուտ են քաղաքականորեն խորհելու, խոսելու և գործելու մեջ:

Մենք պիտի վրացիներից օգտվենք և նրանցից դաս առնենք, և նրանց հետ միշտ խորհուրդ անենք արտաքին քաղաքականության համար: Եվ համոզված եմ, որ նրանց խորհուրդն այդ մասին՝ մեր օգտին կլինի. որովհետև մեր և նրանց շահերը պատմականորեն անխզելի կապված են իրար, այն աստիճանի, որ այս երկու ազգը միասին մի ընդհանուր արտաքին քաղաքականություն պիտի վարեին և վարեն:

Բայց այս մասին առանձին՝

«Ժողովրդի Ձայն», 5 հոկտեմբերի 1918, - 27:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մ. Աբեղյանի և այդ օրերի մասին իր հուշերում Ստ. Ջորյանը գրում է. «... 1918–19 թթ. ես ճանաչեցի Աբեղյանին նաև որպես հայրենասերի: Ճիշտ է, այդ հայտնի է արդեն նրա գրական ուսումնասիրությունից, բայց այդ թվերին ես տեսա նրա հայրենասիրությունը կյանքում, մեր ժողովրդի գլխին տեղացող շարունակական աղետների ժամանակ: Նա խորապես ապրում էր այդ աղետները և հանգիստ չունեք:

... այդ աղետի օրերին, Աբեղյանը իրեն դրսևորում էր բացառիկ ձևով: Ծանր լուրերի, դեպքերի ազդեցության տակ շատերն ընկճվում էին, հուսահատվում և այլևս, կարծես ելք չէին տեսնում մեր ժողովրդի համար. Աբեղյանը սակայն, թեև տխրում էր, տանջվում (մի անգամ ես մինչև իսկ տեսա նրան արտասովեյիս՝ Էրզրումի, Կարսի անկման լուրն առնելուց հետո), բայց երբեք չէր կորցնում հույսն ու հավատը:

– Եղել են ավելի ծանր օրեր և աղետներ, բայց մեր ժողովուրդը գտել է մի ելք և բուժել է իր վերքերը, – ասում էր նա ամեն անգամ, երբ նկատում էր, որ շուրջը՝ զրուցակիցները ընկնում են հուսահատության մեջ:

Այդ օրերին սրտապնդիչ էր լսել այդպիսի խոսքեր, մանավանդ մի հեղինակավոր մարդուց, որն, զգում էիր, թե քաջատեղյակ էր հայ ժողովրդի անցյալին ու պատմությանը: Այս խոսքերն ասվում էին այնպիսի հավատով ու համոզիչ շեշտով, որ մարդ թեթևություն էր զգում և ինքն ևս տոգորվում էր հույսերով:

– Այո, հուսահատվելու կարիք չկա. ամեն ինչ դեռ կորած չէ...» (Ստ. Ջորյան, Հուշերի գիրք, Երևան, 1991, էջ 199–200):

2. Հողվածաշարի մասին տե՛ս Մ. Հարությունյան. Մանուկ Աբեղյան: Կյանքն ու գործը, Երևան, 1970, էջ 97–101:

3. Այդ մասին տե՛ս Վ. Փափագյան. *Տպավորություններ Նուխուց: Դրությունը Նուխվա և Արեշի գավառներում, Թիֆլիս, 1919*, *Участь армян Нухинского и Арешского уездов Елисаветпольской губернии.*– «Наше время» (Баку), 9. II. 1919; 22. II. 1919; А. А. Закарян, А. И. Шахназарян. Бакинская газета «Наше время» о погромах нухинских, арешских и геокчайских армян в 1918 г.– «Вестник общественных наук» АН АрмССР, 1989, 19, с. 81–87.

4. Այդ մասին մանրամասն տե՛ս С. Городецкий. Живое кладбище.– «Кавказское слово» (Тифлис), 8. XI. 1918; Մ. Մ. Մելքոնյան. *Չավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 265–294, Ան. Չաքարյան. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010, էջ 97–99:*

5. *Խոսքը 1914 թ. ստորագրված վրաց-թուրքական պայմանագրի մասին է: Հանգամանորեն տե՛ս* Соглашение грузин с Турцией в 1914 году.– «Кавказское слово», 6. XI. 1918; А н. Закарян. Малоизвестный исторический документ (грузино-турецкое соглашение 1914 г.).– «Историко-филологический журнал», 2005, 13, с. 254–257.

6. Մ. Աբեղյանի հոդվածաշարը բուն արձագանք է առաջացրել հայ ու վրաց մամուլի էջերում: Հոդվածաշարի VI հատվածից հետո Թիֆլիսում հրատարակվող ՀՀԴ Վրաստանի կենտրոնական և Թիֆլիսի տեղական կոմիտեների օրգան «Աշխատավոր» թերթը 1918 թ. սեպտեմբերի 25-ի համարի (-140) «Ո՛վ է «եղբայրասպանը» վերնագրով առաջնորդողում հականե-հանվանե չտալով Մ. Աբեղյանի անունը, սակայն հղում անելով «Ժողովրդի Չայն» թերթին ու նրա հոդվածի վերնագրին՝ «Հայեր և վրացիներ», քննադատության է ենթարկում հոդվածաշարում արժարժված հարցերը: Վրաց կառավարության օրգան «Մաքարթվելոս Ռեսպուբլիկա» թերթն էլ հերյուրանքներով լեցուն նյութ է տպագրում (տե՛ս «Ժողովրդի Չայն», 25. IX. 1918, -19): Օրեր անց Մ. Աբեղյանը «Ժողովրդի Չայնի» էջերում հերքում է «Աշխատավոր»-ի «մեղադրանքները»: Այս թերթի առաջնորդողն ու Մ. Աբեղյանի պատասխանը բերում ենք ամբողջությամբ՝ առանց մեկնաբանությունների:

«Աշխատավոր» թերթն իր «Ո՛վ է «եղբայրասպանը» առաջնորդողում գրում է. «Հայ բուրժուազիայի օրգան «Ժողովրդի Չայն»-ը պրովոկացիա է անում, որ Դ՜աշնակցու>թյան թերթերը «եղբայրասպան» հալածանք են սկսել վրաց դեմոկրատիայի և Վրաստանի հանրապետության դեմ:

Նաև հայ բուրժուազիան իբրև բուրժուազիա, իբրև շահագործող, ճնշող դասակարգ այլ կերպ էլ վարվել չէ կարող:

«Հայ ժողովրդական կուսակցության» անվան տակ թաքնված հայ ժողովրդի (դեմոկրատիայի) թշնամիների այդ կուսակցությունը, այդ գառնազգեստ գայլերի խմբակցությունը «միջազգային» համերաշխության խրատներով կամենում է հասնել իր իսկական նպատակին – պառակտել հայ և վրացի դեմոկրատիան: Մեզ վրացական կառավարության թշնամի, իսկ իրեն նրան բարեկամ ներկա-

յացնելով՝ հայ բուրժուազիան անուղղակի կերպով նացիոնալիստական պրո-վոկացիա է կատարում: Եվ այդպիսի քստմանելի ինսինուացիայով է զբաղվում այն թերթը, որ դեռ մի քանի օր առաջ իր էջերում թուրքերին և վրացիներին հայերի «դարավոր թշնամիներն» (!) էր հայտարարում («Հայերը և վրացիները» հոդվածում):

Ահա՛ թե ո՛վքեր են հանդգնում մեզ համերաշխության և միջազգայնության խրատներ կարդալ և ամենաստոր ինսինուացիան թույլ տալ մեր հասցեին, որ իբրև թե մենք «ամենասուր և եղբայրասպան բանակռիվ» ենք սկսել վրաց սոցիալ-դեմոկրատիայի դեմ:

Ժողովրդների համերաշխության երդվյալ թշնամի բուրժուազիայի համար, իհարկե, ձեռնտու է այսպիսի հանցավոր բանասարկությունը: Նրա սոցիալ-դասակարգային տիրապետության հրամայականն է – «բաժանիր և տիրիր»: Եվ ահա հայ բուրժուազիան ևս սարսափահար Անդրկովկասյան աշխատավոր դասակարգերի միացման գաղափարից՝ կտրվում է իր հարազատ զենքով – նացիոնալիզմի թույնով. նա թշնամանում է հայ և վրացի դեմոկրատիաներին, օգտվելով այն հենց իր շնորհիվ ստեղծած թշնամանքի, որ գոյություն ունի վրացական մեշտանական և սնանկացող ազնվականության խավերում դեպի հայ ժողովուրդը: Վրացական այդ նացիոնալիստական խավերը չկարողանալով կամ չկամենալով հայ բուրժուազիան տարբերել հայ դեմոկրատիայից՝ առաջինի մեղքերը բարդում են երկրորդի վրա: Բուրժուազիայի, ի մեծ դժբախտություն հայ դեմոկրատիայի սովյալ դեպքում հայ ազգի, բուրժուազիայի շահագործող ու սնանկացնող կապիտալի ստեղծած թշնամանքի շնորհիվ է, որ մասամբ այսօր չարաչար տուժում է հայ դեմոկրատիան նաև Վրաստանի սահմաններում:

Այստեղ ապրող ամեն մեկի համար պարզ է, որ հայկական կապիտալի մրցման չդիմացող և մասսայորեն սնանկացող վրացական մանր բուրժուազիան ու ազնվականությունն են, որ տարված են հակահայկական նացիոնալիզմով:

Ճիշտ է, այդ նացիոնալիզմի գորավոր թույնը վարակել է նաև վրաց դեմոկրատիայի որոշ տարրերին, բայց արևի պես պարզ է, որ նախ՝ մեր դեմ եղած թշնամանքի ու հալածանքի բուն պատճառը հայ բուրժուազիան է, հայկական շահագործող կապիտալն է և երկրորդ՝ այդ թշնամանքը բնականաբար իբրև սոցիալական ռեակցիա (հակաշարժում) սնվում ու զարգանում է սնանկացող մանր բուրժուազիայի ու ազնվականության մեջ:

Եվ ովքե՞ր են հայ ժողովրդի դեմ հալածանք բարձրացնողները. – Վրաց նացիոնալ-դեմոկրատները, այսինքն հենց այդ սնանկացող դասակարգերի կուսակցությունը:

Ահա թե «ո՛րտեղ է շան գլուխը թաղած»:

Ահա թե ի՛նչ պետք է հասկանա հայ՝ աշխարհիս ամենաապագային բուրժուազիան, որ նախ՝ փաստորեն, մեծ մասամբ սոցիալ-տնտեսական իրերի օբյեկտիվ ընթացքով, ապա նաև սուբյեկտիվ կերպով հակահայկական նացիոնալիստական պրոպագանդայի մղողը ինքն է:

Հակահայկական նացիոնալիզմի ու հալածանքի իսկական – թե՛ կամա և թե՛ ակամա – պրոպագանդիստը հայազգի կապիտալն է:

Սա էլ մեր երկրորդ դժբախտությունը, երկրորդ «շեյթանն» է: Բռնակալության պրոպագանդիստը – «շեյթանին» միանում է և հայ բուրժուազիայի «շեյթանը» – կապիտալը: Ու այս երկրորդ «շեյթանը», որովհետև դժբախտաբար ազգային շապիկ ունի, ոչ պակաս բացասաբար դեր է կատարել ու կատարում նաև այսօր մասնավորապես հայ և վրացական հարաբերությունների մեջ: Ահա թե ուր պետք է որոնել հայ-վրացական լարված հարաբերությունների բուն պատճառը. դա ոչ թե պատմական-ցեղային-հոգեբանական է, այլ սոցիալ-դասակարգային: Բայց հայ բուրժուազիայի գիտակից թե անգիտակից սպասավորների համար ձեռնտու է իր մեղքը դեմոկրատիայի վզին գցել՝ ինչ որ պատմական-հոգեբանական անմեկին ու բնածին պատճառներ գտնել, քրքրելով նույնիսկ հայկական ժողովրդական մյութոսը և Միեդի բերանով «Վրաստանը» «Վնաստուն» հայտարարել (տե՛ս նույն «Հայերը և վրացիները» հոդվածաշարքը):

Այդպես է միշտ կապիտալիստական դասակարգը. ամեն տեղ ու ամեն դեպքում գիտե նա ժողովուրդների իբրև թե «ի սկզբանե անտի» թշնամանքն ու չեղյալ անտագոնիզմը հիմնավորել պատմականորեն (sic!) և ցեղային-հոգեբանորեն:

Մեր դեմոկրատիայի մեծ դժբախտություններից մեկն էլ դա է, որ Անդրկովկասում և մասնավորապես Վրաստանում շահագործող ու գերիշխող կապիտալը ազգային-հայկական է: «Հայազգի» կապիտալն է, որ Թիֆլիս և «Թիֆլիսի հարց» է ստեղծել, որ իր բնատուր բարիքներից և ոչ մի հատ մեր ժողովրդին չտալով՝ իր բոլոր բացասական կողմերով ծանրանում է դարձյալ գլխավորապես հայ աշխատավորության վրա: Մեր բնաշխարհում – Ալեքսանդրապոլ-Երևան-Շուշի-այրոզ հայությունը հայկական կապիտալի կուլտուրական բարիքներից ոչինչ չի ստանում, բայց մեր բնաշխարհից դուրս այդ կապիտալը օբյեկտիվ և սուբյեկտիվ կերպով հակահայկական-հակաժողովրդական պրոպագանդա և պրոպագանդա է մղում:

Ահա թե ո՞վ է իսկապես «եղբայրասպանը», փաստորեն «ամենասուր և եղբայրասպան» կոչի ու բանակոչի մղողը: Դա հայ ազգի բուրժուազիան է, նաև հայ դեմոկրատիայի ոխերիմ թշնամին»:

«Աշխատավոր» թերթի այս առաջնորդողին ի պատասխան, Մ. Աբեղյանը «Ժողովրդի Ձայն»-ի 1918 թ. սեպտեմբերի 29-ի համարում (-23)՝ «Աշխատավոր» լրագրին» վերնագրով նյութի տակ գրում է.

«Մարդիկ որ մի լրագիր են հրատարակում և ուրիշ մարդկանց առաջնորդում, պետք է և մի քիչ խելք և մի փոքր ազնվություն ունենան: «Վրաստանի կենտրոնական և Թիֆլիսի տեղական կոմիտեների» հրատարակած «Աշխատավոր» օրաթերթը, սակայն, որ խմբագրվում է «Դաշնակցական ընկերների կոլեկտիվի» ձեռքով, ոչ խելք է ցույց տվել և ոչ ազնվություն իմ «Հայեր և վրացիներ» հոդվածի առթիվ, որ տպված է «Ժողովրդի Ձայն»-ի մի քանի համարների մեջ:

1. Այդ թերթը իր սեպտեմբերի 25-ի -140 առաջնորդող հոդվածի մեջ գրում է, թե իբր ես իմ վերոհիշյալ հոդվածի մեջ «Վրացիներին հայերի «դարավոր թշնամիներն» (!) եմ հայտարարել»:- «Դարավոր թշնամիներն» (!) ընդգծած, չակերտների մեջ դրված և զարմացականով:

Այդ «ընկերների կոլեկտիվը» պետք է իմանա, որ ես եթե ոչ իրանցից ավելի, գոնե իրանց չափ կարդացել եմ հայոց պատմություն և գիտեմ, թե հայերն ու վրացիները դարերի ընթացքում ի՞նչ հարաբերություն են ունեցել: Ուստի ես իմ վերոհիշյալ հոդվածի մեջ չէի կարող այդպիսի բան գրել և չեմ էլ գրել: Այլ, ընդհակառակն, վրացիների համար գրել եմ.

«Վրացին հայ ազգի համար լավ հարևան է եղել»... «քսան դար շարունակ հայ և վրացի իբրև հարևան հաշտ են ապրել, երբեք պատերազմ չեն վարել միմյանց դեմ»... Ապա հիշելով մի երկու անախորժ դեպքեր՝ ավելացրել եմ. «Բայց և այնպես դա պատճառ չի եղել, որ երկու ազգի մեջ թշնամություն առաջ գա»... «բայց և այնպես... չի խախտվել երկու ազգերի բարի հարևանությունը և նույնիսկ բարեկամությունը» («Ժողովրդի» Չայն», -3): Այնուհետև վրացիներին համեմատել եմ սիրելի եղբոր հետ, անվանել եմ նրանց «եղբայր ազգ», հայերին և վրացիներին համարել եմ «դարավոր եղբայր ժողովուրդներ», վրացիներին կոչել եմ «հին բարի հարևաններ», «բարի հարևաններ» և այլն («Ժողովրդի» Չայն», -- 4, 5, 12):

2. Նույն թերթը նույն առաջնորդողի մեջ գրում է դարձյալ. «Հայ բուրժուազիայի գիտակից թե անգիտակից սպասավորների համար ձեռնտու է իր՝ մեղքը դեմոկրատիայի վզին զցել՝ ինչ որ պատմական-հոգեբանական անմեկին ու բնածին պատճառներ գտնել, քրքրելով նույնիսկ հայկական ժողովրդական մյուսոսը և Միերի բերանով «Վրաստանը» «Վնաստուն» հայտարարել (տե՛ս նույն «Հայերը և վրացիները» հոդվածաշարքը): Այդպես է միշտ կապիտալիստական դասակարգը. ամեն տեղ ու ամեն դեպքում գիտե՛նա ժողովուրդների իբրև թե «ի սկզբանե անտի» թշնամանքն՝* ու չեղյալ անտագոնիզմը հիմնավորել պատմականորեն (sic!) և ցեղային-հոգեբանորեն»:

Առաջարկում եմ «Աշխատավոր» լրագրի «Դաշնակցական ընկերների կոլեկտիվին», որ խմբագրությունն է, և Դաշնակցության «Վրաստանի կենտրոնական և Թիֆլիսի տեղական կոմիտեներին», որ նույն թերթի հրատարակիչներն են, կարդալ նորից իմ հոդվածը, գոնե «Ժողովրդի» Չայն» -3, և միասին խելք խելքի տալ և տեսնել, թե ես ի՞նչ եմ գրել: Գուցե այն ժամանակ նրանք կարողանան իմ շատ պարզ լեզվով գրածը հասկանալ և տեսնել, որ ես հենց բոլորովին հակառակն եմ գրել. որ ես Վրաստանը վնաստուն չեմ հայտարարել, այլ, ընդհակառակն, հայերի համար վտանգի ժամանակ «ամուր

* Ո՞ւմ մեղքը. արդյոք բուրժուազիայի՞. բայց այն ժամանակ պետք էր գրել նրա թե՛ սպասավորների, բայց այն ժամանակ պետք էր գրել իրանց և ոչ իր:

** Ուզում է ասել՝ թշնամությունը:– Թշնամանք հայերեն կնշանակի՝ հայհոյանք, անարգանք:

պարիսպ ապաստանի», մի երկիր, ուր հայերը մահմեդականներից վտանգված ժամանակ «հանգստություն են գտել»։ «Վրաստանը հայի համար վնաստուն չի եղել։ Նա կարող էր այնտեղ հանգիստ լինել իր կյանքի համար... «Աշխատավորի» խմբագիրներն ու հրատարակիչները գուցե միասին կարողանան հասկանալ, որ ես ոչ մի մեղք չեմ ձգել «դեմոկրատիայի վզին», այլ, ընդհակառակն, հայտնել եմ, թե «այս պատմական իրողությունը», այսինքն այն, որ Վրաստանը հայերի համար մի հանգիստ և անվնաս տեղ է եղել, «այնպես խորը գիտակցել է հայ հասարակ ժողովուրդն անգամ, որ իր վեպի մեջ կենդանի կերպով արտահայտել է»...

Ինչ է այս, պարոններ: Արդյոք դուք մտքով այնքան կույր եք, որ շատ պարզ գրած ու կրկնած բաները բոլորովին հակառակ ձևով եք հասկանում, թե՛ այնքան անբարեխիղճ եք, որ հասկանում եք և գիտակցաբար այդպես եք վարվում:

Եթե առաջինն է, էլ ի՞նչպես կարող եք ավելի մեծ ու բարդ բաները հասկանալ, սոցիալիզմից խոսել ու գրել... Իսկ եթե երկրորդն է, բայց այն ժամանակ ձեր դատը պիտի անեն ձեր կոմիտեները, որոնք իրանց խմբագիրներից եթե ուրիշ ոչինչ չպահանջելու լինին, զոնե բարեխղճություն պիտի պահանջեն:

Բայց գուցե անգիտակցաբար ընկել եք այդ մոլորության մեջ: Այն ժամանակ դուք պարտավոր եք ձեր թերթի մեջ նույն տեղում հերքելու ձեր գրածն իմ հոդվածների մասին:

7. Նկատենք, որ Մ. Աբեղյանն այս թեմայով հետազայում առանձին հոդվածով կամ հոդվածաշարով հանդես չի եկել: Դրա փոխարեն «Ժողովրդի Չայն» թերթի 1919 թ. հունվարյան համարներում (-17-22) տպագրել է «Լոռի (պատմական տեսություն)» վերնագրով հոդվածաշարը: